

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿ

Ս.թ. նոյեմբերի 24-ին Մեսրոպ Մաշտոց Համալսարանում կկայանա միջազգային գիտաժողով՝ «Դե-Ֆակտո պետությունները հետխորհրդային տարածաշրջանում. զարգացման ուղղությունները և հեռանկարները»>> թեմայով:

**Գիտաժողովի կազմակերպիչներն են՝
Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի
նախարարություն
Մեսրոպ Մաշտոց Համալսարան**

Գիտաժողովի կազմկոմիտեն հրավիրում է բոլոր գիտական և փորձահետազոտական հանրության ներկայացուցիչներին մասնակցելու միջազգային գիտաժողովին՝ նվիրված հետխորհրդային տարածաշրջանում դե-Ֆակտո պետություններում տեղի ունեցող գործընթացների վերլուծությանը: Տվյալ ձևաչափը հնարավորություն է ստեղծում բացահայտելու վերոնշյալ պետությունների սոցիալական, տնտեսական, քաղաքական և քաղաքացիական ոլորտների ընդհանրություններն ու առանձնահատկությունները: Կարծում ենք կարևոր է միմյանց իրազեկել բոլոր այն գործընթացների մասին, որոնք տեղի են ունենում մեր պետություններում և մեր քաղաքացիների կյանքում:

Գիտաժողովի մասնախմբերն են՝

1. Իրավունք, քաղաքագիտություն, փիլիսոփայություն, պատմություն, միջազգային հարաբերություններ, տարածաշրջանագիտություն,
2. Տնտեսագիտություն, կառավարում, ինֆորմացիոն տեխնոլոգիաներ,
3. Լեզվաբանություն, թարգմանչական գործ, լրագրություն, գրականագիտություն,
4. Մանկավարժություն, մեթոդիկա, հոգեբանություն:

Գիտաժողովի աշխատանքային լեզուներն են՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն:

Գիտաժողովին մասնակցելու համար անհրաժեշտ է էլեկտրոնային տարբերակով m.mashlots@mail.ru էլ.հասցեին ուղարկել.

1. գիտաժողովի մասնակցության հայտը (ձևը կցվում է) - մինչև ս.թ. հոկտեմբերի 10-ը;
2. հոդվածի տեքստը - մինչև ս.թ. հոկտեմբերի 15-ը:

Ի գիտություն՝

Բոլոր նյութերը ստուգվելու են «Անտիպլագիատ» համակարգով և ոչ օրինաչափ փոխառությունների առկայության և արդիականության բացակայության դեպքում հոդվածը չի ընդունվելու:

Գիտաժողովի նյութերը պետք է ներկայացվեն առանձին ֆայլով և համապատասխանեն հետևյալ պահանջներին.

- Հոդվածի ծավալը՝ մինչև 8 էջ /«Մեթոդիկա» մասնախմբի համար 8 էջից ոչ պակաս, /
- Տեքստում ունենալ հղումներ /տե՛ս հոդվածի ձևավորման նմուշը/,
- Ունենալ անտոսացիա՝ հոդվածի շարադրման լեզվով և 2 այլ լեզուներով /հոդվածի գրման լեզվից տարբեր/,

- Բանալի բառեր՝ 3 լեզուներով,
- Բոլոր հոդվածները պետք է շարված լինեն.
 - Ռուսերեն՝ Times New Roman, տառաչափ՝ 12
 - Հայերեն՝ Sylfaen, տառաչափ՝ 12
 - Անգլերեն՝ Times New Roman, տառաչափ՝ 12

Հոդվածները ընդունվում են մինչև ս.թ. հոկտեմբերի 15-ը:
Ուղեվարձը և գիշերակացն ապահովում են մասնակիցները:

Հոդվածի հեղինակը պատասխանատու է ներկայացրած նյութի բովանդակության ու գրագիտության համար:

Գիտաժողովի նյութերի ժողովածուի հրատարակումը նախատեսվում է գիտաժողովին ընդառաջ:

Հոդվածը և հայտը պարունակող ֆայլի անվանումը պետք է համընկնի հոդվածի հեղինակի ազգանվան հետ:

Հրատարակման վճար՝ 5000 դրամ:

Գիտաժողովի կազմակերպիչի նախագահ՝ փ.գ.թ., ՄՄՀ պրոֆեսոր Ղարիբ Միքայելի Բաբայան:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել իրավագիտության ֆակուլտետի դեկան Ալվինա Ներսեսյանին (e-mail: alners@inbox.ru) և կոորդինատոր Մարիաննա Դոլուխանյանին (e-mail: m.mashtots@mail.ru).

Տեղեկատվական նամակը տեղադրված է www.mashtots.am կայքում:

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ

ԱԱՀ	
Աշխատավայրը	
Պաշտոնը	
Գիտական աստիճանը, կոչումը	
Հեռախոսահամարը	
E-mail	
Զեկույցի թեման	
Հասցե՝ ժողովածուն ուղարկելու համար	

ՀՈԴՎԱԾԻ ՁևԱԿԵՐՊՄԱՆ ՆՄՈՒՇ

ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Ի.Ի.Մարգարյան

ՀՀ, Ստեփանակերտ, Մեսրոպ Մաշտոց Համալսարան

e-mail: sarkisyan@mail.ru

Անտացիա (ծավալը 7-10 տողից ոչ պակաս, տառաչափը՝ 12) – հոդվածի շարադրման լեզվով,

Բանալի բառեր (5 – 9) – հոդվածի շարադրման լեզվով,

Հոդվածի տեքստ (տառաչափը՝ 12),

Հղումներ՝ [1, էջ. 12],

Օգտագործված գրականության ցանկ (այբբենական կարգով),

Անփոփում՝ հոդվածի շարադրման լեզվից տարբեր 2 լեզուներով,

Բանալի բառեր (5 – 9)՝ հոդվածի շարադրման լեզվից տարբեր 2 լեզուներով: